



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«29» 11 20²² թ.

No 03/3-4/84592-2022

«ՎԻՐՏՈՒՈՋ» ՍՊԸ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Հ. ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ՊԵԿ ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ՊԱՐՈՆ Կ. ԹԱՄԱԶՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 06.09.2022թ. գրության

Հարգելի պարոն Դանիելյան

Հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասը և 307-րդ հոդվածը՝ իրագեկման կարգով հայտնում ենք հետևյալը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝

- 132-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների օբյեկտներն են՝ գույքը՝ ներառյալ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները,

- 423-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորությունը լրիվ կամ մասնակի դադարում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով,

- 424-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատշաճ կատարումը դադարեցնում է պարտավորությունը,

- 426-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունը լրիվ կամ մասնակի դադարում է միատեսակ հանդիպական այն պահանջի հաշվանցով, որի ժամկետը լրացել է կամ

նշված չէ, կամ որոշված է պահանջի պահով: Հաշվանցի համար բավական է մեկ կողմի հայտարարությունը,

- 367-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանդիպական է ճանաչվում կողմերից մեկի պարտավորության կատարումը, որը պայմանագրին համապատասխան, պայմանավորված է մյուս կողմի պարտավորության կատարմամբ,

- 427-րդ հոդվածի համաձայն՝ պահանջների հաշվանց չի թույլատրվում, եթե՝

1) մյուս կողմի դիմումով պահանջի նկատմամբ ենթակա է կիրառման հայցային վաղեմության ժամկետ և այդ ժամկետը լրացել է.

2) դրանք վերաբերում են կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցմանը.

3) դրանք վերաբերում են ալիմենտի բռնագանձմանը:


Պահանջների հաշվանց չի թույլատրվում նաև օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում,

- 877-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխառության պայմանագրով մեկ կողմը (փոխատուն) մյուս կողմի (փոխառուի) սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխատուին վերադարձնել միևնույն գումարի դրամ (փոխառության գումարը) կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք:

Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրամ կամ այլ գույք հանձնելու պահից,

- 880-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ փոխառության գումարը համարվում է վերադարձված այն փոխատուին հանձնելու կամ նրա բանկային հաշվին փոխանցելու պահին, եթե այլ բան նախատեսված չէ փոխառության պայմանագրով:

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ պարտավորության դադարելը հաշվանցով հնարավոր կլինի այն պարագայում, երբ առկա կլինեն օրենսդրությամբ սահմանված բոլոր պայմանները, որոնց միաժամանակյա առկայությունը հաշվանց կատարելու համար պարտադիր է: Մասնավորապես՝ կողմերի պահանջները պետք է լինեն հանդիպական և հաշվանցվող պարտավորություններ՝ միատեսակ: Միաժամանակ, հաշվանցի համար բավական է մեկ կողմի հայտարարությունը:



«Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքի՝

- 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ անկանխիկ ձևով գործառնություն (վճարում) է համարվում կանխիկ կամ անկանխիկ եղանակով նախաձեռնած վճարումը, որն ուղղված է (փոխանցվում է) շահառուի (վճար ստացողի) բանկային հաշվին, կամ անկանխիկ եղանակով նախաձեռնած վճարումը, որն ուղղված է (փոխանցվում է) շահառուի (վճար ստացողի) էլեկտրոնային փողի հաշվին: Ընդ որում, անկանխիկ եղանակով նախաձեռնած վճարում է համարվում նախաձեռնողի բանկային կամ էլեկտրոնային փողի հաշվից կատարված վճարումը (փոխանցումը),

- 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից 2022 թվականի հուլիսի 1-ից 300,000 Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ապրանքների օտարման, գույքի օտարման, ապրանքների օգտագործման, գույքի օգտագործման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված պասիվ եկամուտների վճարման, փոխառությունների տրամադրման և ստացման գործարքների, եթե դրանց մի կողմը ֆիզիկական անձ է, դիմաց վճարումը և վճարի ստացումն իրականացվում են անկանխիկ ձևով՝ անկախ վճարման կարգից, եթե նույն օրենքով և այլ օրենքներով այդ գործարքների դիմաց վճարման ավելի ցածր սահմանաչափեր և այլ բացառություններ նախատեսված չեն:

ՀՀ հարկային օրենսգրքի՝

- 60-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ են համարվում աշխատանքի կատարումը և (կամ) ծառայության մատուցումը (բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի): Նույն կետի կիրառության իմաստով՝ ծառայության մատուցում է համարվում նաև փոխառության տրամադրումը,

- 62-րդ հոդվածի 19-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ վարկերի (փոխառությունների) տրամադրման ծառայությունների համար ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում դրանց դիմաց ստացվող տոկոսային եկամուտը՝ դրամական արտահայտությամբ, ինչպես նաև վարկերի (փոխառությունների) տրամադրման պահին միանվագ գանձվող՝ վարկի (փոխառության) տրամադրման վճարը, վարկի



սպասարկման (այդ թվում՝ մոնիտորինգի) համար որոշակի պարբերականությամբ գանձվող վճարները, վարկային հայտի ուսումնասիրության համար գանձվող վճարը, վարկային հաշիվների բացման, վարման և սպասարկման համար գանձվող վճարները,

- 64-րդ հոդվածի 2-րդ մասի 47-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ բանկերի, վարկային կազմակերպությունների և այլ հարկ վճարողների կողմից վարկերի կամ փոխառությունների կամ գույքի լիզինգով (տարատեսակներով) տրամադրման, այդ թվում՝ պարտքերի կամ առևտրային գործարքների ֆինանսավորման ու ֆակտորինգային այլ ծառայությունների մատուցումն ազատված է ԱԱՀ-ից,

- 142-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ օրենսգրքի 7-րդ բաժնի կիրառության իմաստով՝ պասիվ եկամուտների մասով եկամտային հարկով հարկման օբյեկտի հաշվառումն իրականացվում է (հարկի հաշվարկը կատարվում է) հաշվառման դրամարկղային մեթոդով,


- 147-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետի համաձայն՝ եկամտային հարկով հարկման բազան որոշելու նպատակով նվազեցվող եկամուտներ են համարվում արժեթղթերից ստացվող եկամուտները՝ օրենսգրքի 149-րդ հոդվածի համաձայն,

- 149-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետին համապատասխան՝ եկամտային հարկով հարկման բազան որոշելու նպատակով նույն հոդվածի 1-ին մասով սահմանված եկամուտները չեն համարվում նվազեցվող եկամուտներ (չեն նվազեցվում համախառն եկամտից), եթե ստացվում են որպես շահաբաժին, բացառությամբ ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում ցուցակված բաժնետոմսերից ստացվող շահաբաժինների,

- 150-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ շահաբաժինների մասով եկամտային հարկը հաշվարկվում է հինգ տոկոս դրույքաչափով՝ հաշվի առնելով օրենսգրքի 149-րդ հոդվածով սահմանված նվազեցումները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գրությամբ բարձրացված հարցերի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

1) հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում հաշվանց կատարելու համար առկա են օրենսդրությամբ սահմանված բոլոր պարտադիր պայմանները, մասնավորապես՝ կողմերի պահանջները հանդիպական են և հաշվանցվող պարտավորությունները միատեսակ՝ դրամական, հետևաբար՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 426-րդ հոդվածը, հայտնում ենք, որ փոխառության




պայմանագրերի մասով առաջացած պարտավորությունները կարող են դադարել հաշվանցով՝ շահաբաժին վճարելու պարտավորության դիմաց և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգավորումների առումով այն կհամարվի իրավաչափ,


2) կազմակերպության կողմից փոխառության տրամադրումը՝ որպես ծառայության մատուցման գործարք, համարվում է ԱԱՀ-ով հարկման օբյեկտ: Միաժամանակ, կազմակերպության կողմից փոխառության տրամադրման գործարքը օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 47-րդ կետի «բ» ենթակետի համաձայն ազատված է ԱԱՀ-ից:

Կազմակերպության հիմնադրին վճարման ենթակա շահաբաժինների գումարները կազմակերպության նկատմամբ՝ հիմնադրի փոխառության գծով պարտավորության հաշվին մարելու (վճարելու) դեպքում, շահաբաժիններից (բացառությամբ՝ ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում ցուցակված բաժնետոմսերից ստացվող շահաբաժինների)՝ փոխառության մարման համաձայնության հիման վրա շահաբաժնի և փոխառության փոխմարման ամսում, հարկային գործակալը հաշվարկում է եկամտային հարկ՝ 5% դրույքաչափով,

3) եթե փոխառության պայմանագրերի մասով առաջացած պարտավորության չափը բավարարում է վճարման ենթակա շահաբաժնի չափին, ապա նշված դեպքում հաշվանց կատարելիս «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտում առկա չէ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

X 
ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Signed by: MANUKYAN ARTUR 3801690067



Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կառ.՝ ՎԱԸՎ ընթացակարգերի բաժին,
հեռ. 060-844-648



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am